Արձանագրություն N 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նիստի

10 հուլիսի 2018թ

ք. Երևան սկիզբը՝ ժամը՝ 9^{15}-ին
ավարտը՝ ժամը 10^{35}-ին

Նիստը նախագահում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար, խորհրդի նախագահ

Ա. Խաչատրյանը

Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ.

Ա.Թարվերդյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր
Ա. Ոսկանյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ
Հ. Ջավադյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» «Ագրոբիզնեսի և շուկայաբանություն» ֆակուլտետի դեկան
Վ.Ուռուտյան	«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Գ.Սարդարյան	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ն. Մանուկյան	«Արենի» փառատոն» հիմնադրամի տնօրեն
Ս. Ավդալյան	«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ա.Ղազանչյան	«Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ֆ.Աշիկյան	«Էկո-Գլոբ» բնապահպանական հասարակական կազմակերպության փոխնախագահ
Ա.Հարությունյան	«Գինու ազգային կենտրոնի» գործադիր տնօրեն
Հ.Հովհաննիսյան	«Հայկական պտղատնկարանների ասոցիացիա» գյուղատնտեսական հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Ջհանգիրյան	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերողների համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ս.Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության թռչնաբույծների միության

	նախագահ
Ա. Բիլյան	«Մսամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
	«Մուլտի Ագրո» գիտարտադրական կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Իսկոյան	«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Գոմկցյան	«Օքսֆամ» հայաստանյան մասնաճյուղի գյուղատնտեսական ծրագրերի պատասխանատու
Վ.Ղազարյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության անդամ

Բացակայում էին՝

Վ. Համբարձումյան	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Ա.Ղազանչյան	«Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ե.Թարվերդյան	Հայաստանի պահածոյագործների և հյութարտադրողների միության նախագահ

Հրավիրված էին՝

Գ.Մանուկյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի մամուլի քարտուղար
Ս.Սիմոնյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Օրակարգ

1. ՀՀ գյուղատնտեսական քաղաքականության առաջնահերթություններն ու զարգացման առաջիկա տեսլականը:

   (Զեկուցող՝ *ՀՀ գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյան*)

2. Վիճակահանության անցկացում՝ ռոտացիոն կարգով խորհրդի նոր անդամների համալրման նպատակով:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը ՀՀ գյուղատնտեսության նախարար Ա. Խաչատրյանը ողջունել է խորհրդի անդամներին՝ նշելով, որ դա իր առաջին նիստն է՝ որպես խորհրդի նախագահ և ընդգծելով, որ այսուհետ նիստերը տեղի կունենան եռամսյակային պարբերականությամբ, ինչպես և նախատեսված է աշխատակարգով: Այնուհետև խորհուրդն անցել է օրակարգային հարցերի քննարկմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարը ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսական քաղաքականության առաջնահերթություններն ու զարգացման առաջիկա տեսլականը: Նախարարի խոսքով՝ առաջնահերթ մոտեցումներից է լինելու ավելացնել պետության կարգավորիչ դերը գյուղատնտեսության ոլորտում: Նա նշել է, որ շատ երկրներ իրենց համախառն արտադրանքի մի զգալի մասն ուղղում են գյուղատնտեսության սուբսիդավորմանը կամ դոտացմանը, օրինակ՝ ԵՄ-ում գյուղացիական տնտեսությունների եկամուտի շուրջ 20 տոկոսը ստացվում է պետությունից, ՀՀ-ում այժմ առկա են ֆոսֆորական և ազոտական պարարտանյութերի (ազոտական պարարտանյութերի շուկան այս տարվանից ազատականացվել է), սերմացուների, դիզելային վառելիքի սուբսիդավորման ծրագրեր, ոռոգման ջրի արժեքի սուբսիդավորումը, քանի որ շատ համայնքներում այն շատ ավելի բարձր է, քան պետությունը վաճառում է գյուղացիական տնտեսություններին և անուղղակի սուբսիդավորման տեսակ կարելի է համարել գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ծրագիրը: Խորհրդի նախագահը նշել է, որ իր կարծիքով անհրաժեշտ է սուբսիդավորման գումարի տրամադրման ձևը փոխել՝ կիրառելով պետական սուբսիդավորման քաղաքականության մեջ նոր, առավել արդյունավետ մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան վերոնշյալ ծրագրերում արձանագրված թերություններից ու չարաշահումներից խուսափել: Նա հավելել է, որ քննարկվող տարբերակներից է վերջնական սպառողին աջակցության տրամադրումը՝ վերահսկման մեխանիզմների ներդրմամբ, օրինակ՝ վաուչերային մեխանիզմերի կիրառումը, երբ գումարը հնարավոր կլինի կանխիկացնել միայն առանձին լիցենզավորված կազմակերպություններից առանձին արտադրատեսակների ձեռքբերման նպատակով: Մյուս մոտեցումը փոքր տնայնագործական տնտեսություններին աջակցություն ցուցաբերելն է, նրանց պարագայում գյուղատնտեսությունն ավելի սոցիալական նշանակություն ունի և աջակցության տրամադրումը նպատակ ունի խթանել դեպի առավել արդյունաբերական գյուղատնտեսության: Այդ նպատակով փորձնական ծրագիր կիրականացվի ԱԶԲ-ի ֆինանսավորմամբ Արարատի և Արմավիրի մարզերում ընթացիկ տարվա աշնանը: Նախատեսվում է իջեցնել սուբսիդավորվող վարկերի տրամադրման շեմը, որը հետաքրքրական կլինի փոքր տնտեսությունների համար: Ուշադրության կենտրոնում է լինելու գյուղատնտեսական արժեշղթաների զարգացումը՝ սեզոնայնության գործոնը մեղմելու նպատակով, օգտագործվող հողատարածքների ծավալների ավելացումը, օրգանական և բարձրարժեք գյուղատնտեսությունը: Նախարարը նշել է, որ հանրապետությունում չի օգտագործվում վարելահողերի շուրջ 30 տոկոսը, օգտագործվող հողերի մի մասն էլ

գերաարածեցված է և վտանգի տակ է, որի ուղղությամբ նույնպես պետք է իրականացվեն աշխատանքներ: Բացի այդ, հոկտեմբերին կսկսեն խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման աշխատանքները, իսկ մյուս տարվա սկզբից կմեկնարկի գյուղապահովագրության պիլոտային ծրագիրը. Արմավիրի և Արարատի մարզերում ընտրվել են խաղողն ու պտուղը, և Շիրակի մարզում՝ հացահատիկն ու կարտոֆիլը, որոնք կապահովագրվեն կարկուտի և ցրտահարության ռիսկերից: Նախարարն անդրադարձել է նաև գյուղացիական վարկերի տույժ-տուգանքների զիջման՝ ՀՀ կառավարության նախաձեռնությանը՝ շեշտելով, որ որոշումը վերաբերում է մինչև 2018թ. մայիսի 31-ը կուտակված ժամկետանց պարտավորությունների գծով տույժ-տուգանքների դուրսգրմանը: Նախարարը խորհրդի անդամներին տեղեկացրել է նաև, որ վերջերս աշխատանքային այցով Արցախի Հանրապետությունում էր, որտեղ հանդիպումներ է ունեցել նախագահ Բակո Սահակյանի, պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանի և գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանի հետ, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի բոլոր ծրագրերում ընդգրկվեն նաև Արցախի գյուղնախարարության աշխատակիցները և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչները:

Զեկույցի վերաբերյալ առաջարկություններ և հարցեր ներկայացրեցին **Ա. Գոմկցյանը, Հ. Ջավադյանը, Ֆ. Աշիկյանը, Ա. Ոսկանյանը, Ն. Մանուկյանը, Վ. Ուռուտյանը, Ռ. Ծառուկյանը, Ա. Իսկոյանը, Ա. Թարվերդյանը, Հ. Ջհանգիրյանը:**

Ա. Գոմկցյան՝

Գյուղատնտեսական դաշինքի մեջ ընդգրկված կազմակերպությունները ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ նախորդ տարիներին աշխատանքներ են իրականացրել «Գյուղի և գյուղատնտեսության զարգացման 2017-2025 թթ. ռազմավարության» նախագծի մշակման ուղղությամբ, ի՞նչ ճակատագիր է ունենալու այդ փաստաթուղթը:

Պաշտոնական մեկնաբանություն. Ռազմավարական փաստաթուղթ անպայման ունենալու ենք, սակայն այն պետք է լինի ավելի համապարփակ և դրանում պետք է արտացոլվեն այն մոտեցումները, որոնց մասին խոսվեց զեկույցում:

Հ. Ջավադյան՝

Ռազմավարության մշակումը խիստ կարևոր է, մենք պետք է սահմանենք առաջնահերթությունները, ուղղությունները, թե ինչ ճանապարհով ենք շարժվում, ինչպես նաև գնահատենք մինչ այժմ իրականացված շուրջ 52 սուբսիդավորման ծրագրերի արդյունավետությունը:

Պաշտոնական մեկնաբանություն. Միանշանակ համամիտ եմ Ձեզ հետ: Ցավոք, որևէ ծրագրի արդյունավետություն մինչ այժմ պատշաճ կերպով չի գնահատվել: Մեզ համար

առաջնային նշանակություն ունեն մոնիտորինգի և ազդեցության գնահատման կարողությունների զարգացումը, ինչպես նաև գյուղատնտեսական կրթությունը:

Ֆ. Աշիկյան՝

Արդեն մի քանի տարի նախարարությունը օրգանական գյուղատնտեսությունը շեշտադրում է գերակա ոլորտ, սակայն մինչ այժմ ռազմավարություն չի մշակվել: Արդյո՞ք պատրաստ եք համագործակցել մեզ հետ, որպեսզի այդ ռազմավարությունը վերջապես ստեղծենք:

Պաշտոնական մեկնաբանություն. Այո, պատրաստ ենք:

Երբ խոսում ենք սինթետիկ պարարտանյութերի սուբսիդավորման մասին, անհավասար նժարների վրա ենք դնում օրգանական արտադրողներին, որոնք ավելի բարձր արժեքով արտադրանք են ստանում: Արդյո՞ք ինչ-որ մեխանիզմ մշակվել է այս ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. Դրա համար մենք առաջարկում ենք շահառուին գումար տրամադրել և ընտրության հնարավորություն տալ իր ուզած պարարտանյութը ձեռք բերելու լիցենզավորված ընկերություններից, որոշում կայացնողը լինելու է շահառուն, հետևապես հավասարության կամ անհավասարության հարց չի ծագի: Արցախում պարարտանյութը տրամադրում են միայն հողի ագրոքիմիական ուսումնասիրություն կատարելուց հետո, սա ավելի ճիշտ մոտեցում է, մենք նույնպես գյուղացուն կարող ենք ասել, որ գումարը կտրամադրենք, կամ ավելի շատ գումար կտրամադրենք, եթե շարժվես մեր առաջարկած ուղիով:

Ա. Ոսկանյան՝

Մենք շատ առիթներ ենք ունեցել այս սեղանի շուրջ խոսելու գյուղատնտեսության ոլորտի տարաբնույթ հարցերի մասին: Հասարակական խորհուրդների գործունեության արդյունավետությունը միշտ կապված է եղել նրանից, թե նախարարը որքանով է անդամներին մոտ թողնում իրականացվող ծրագրերին: Մենք կարող ենք օգտակար լինել ռազմավարության մշակման առումով, բայց ես կուզենայի որպեսզի ուշադրություն դարձնենք ավելի միջնաժամկետ՝ եռամյա, հնգամյա ծրագրերին, որտեղ մեր օրակարգը ամբողջությամբ տեղավորվում է և առաջնահերթություններն էլ են ակնհայտ, և տեսլականն է երևում: Ես առաջարկում եմ, որպեսզի լինեն հանձնարարականներ, մենք այդ ծրագրերի կազմմանը կմասնակցենք, սակայն դրանք լինեն ծրագրեր, որտեղ հստակ կերևա՝ իրավական առումով ինչպես ենք դաշտն ամբողջականացնում, ի՞նչ օրենսդրություն է անհրաժեշտ, ստեղծենք համապարփակ ծրագիր, որտեղ բոլոր ուղղությունները արտացոլված կլինեն, կլինի նպատակ և դրան հասնելու ճանապարհները:

Պաշտոնական մեկնաբանություն. Առաջարկն ընդունվել է ի գիտություն:

Ն. Մանուկյան՝

Ձեր զեկույցում չհիշատակվեցին գինեգործությանը և խաղողագործությանը վերաբերող ծրագրերը:

Պաշտոնական մեկնաբանություն. Բոլոր ծրագրերը շարունակվելու են: Ես խոսեցի փոփոխությունների մասին, ինչի մասին, որ չեմ նշել, նույնն է մնացել, դա մեզ համար կարևոր ոլորտ է: Վերջերս օրենսդրական փոփոխություններ ենք կատարել, խաղողի կադաստր ենք մշակելու, ունենք կոլեկցիոն այգի:

Ռ. Ծառուկյան՝

Իմ խնդրանքն է, որպեսզի սերմնաբուծության հարցը լուծվի ի հաշիվ տեղական սերմերի: Վարդենիսում մենք ունենք հողատարածք, որտեղ ցորեն և գարի է արտադրվում, սակայն հանձնում են օղի արտադրողներին: Ես խոսում եմ Գեղարքունիքի սերմարտադրողների անունից: Այդ սերմն ափսոս է, ես առաջարկում եմ հանձնաժողով կազմել, որպեսզի սերմերը փորձարկման ենթարկեն, ստուգեն դրանց որակական հատկանիշները, դրանց ծլունակությունը, և տեղական սերմերին կարևորություն տանք՝ դրսից ներկրելու փոխարեն:

Պաշտոնական մեկնաբանություն. Մոտեցումն ընդունելի է և կքննարկվի:

Ա.Իսկոյան՝

Ինչպիսի՞ն է ՋՕԸ-ների գործունեության գնահատականը գյուղացիների կողմից, այդ թվում՝ ոռոգման ջրերի որակի հարցին կուզեի անդրադառնաք: USAID-ի հետ ծրագիր էր իրականացվում, որտեղ առաջարկվում էր ոռոգման ջրերի մասին օրենք ընդունել:

Պաշտոնական մեկնաբանություն. Չեմ ցանկանում այս մասով գնահատականներ հնչեցնել, իրականությունն այն է, որ Ջրային տնտեսության պետական կոմիտեն ենթարկվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը:

Նշեցինք, որ վարելահողերի շուրջ 30 տոկոսը չի օգտագործվում, օրենսդրությունն ասում է, որ եթե 3 տարի հողը չի մշակվում, պետությունը այն վերցնում է սեփականատիրոջից, այսինքն՝ մենք ունենք իրավական մեխանիզմ, որպեսզի հողն օգտագործվի: Բացի այդ, 1991 թվականին ընդունվեց «Գյուղացիական տնտեսությունների մասին» օրենքը, որը շատ լավ օրենք էր, ԱՊՀ պետությունների խորհրդակցություն էր, որտեղ ներկայացրեցին Հայաստանի օրինակը, այժմ այդ օրենքը չի գործում, գուցե մենք քննարկենք այդ օրենքը վերականգնելու հարցը:

Պաշտոնական մեկնաբանություն. Ոչ թե պետությունը, այլ համայնքն իրավունք ունի վերցնել հողը: Սակայն միայն ֆիսկալ քաղաքականության միջոցով չօգտագործվող հողատարածքները գյուղատնտեսություն վերադարձնելն անիրատեսական է, այստեղ ավելի շուտ խրախուսման մեխանիզմներ պետք է կիրառվեն, քան իրավական պատժիչ մեթոդներ:

Վ. Ուռուտյան՝

Հարցս վերաբերում է կոոպերատիվների շարժմանը: Գնահատականներն իհարկե միանշանակ չեն, սակայն մեր պարագայում գյուղատնտեսությունում առկա խնդիրների լուծման համար կոոպերատիվները հսկայական դերակատարում կարող են ունենալ: Մյուս կողմից մենք ունենք 50-ից ավել գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնք սառեցրել են

իրենց գործունեությունը, այն պարագայում, երբ առաջին անգամ իրենք փայավճարի գումար են ներդրել, նաև ունենք 60-ից ավել ֆերմերային խմբեր, որոնք գործունեություն են իրականացնում, բայց չեն ուզում գրանցվել, որովհետև հարկային խնդիրների առաջ են կանգնում: Այսինքն՝ միանշանակ է, որ այստեղ անելիք կա և կոոպերատիվների ընկալման խնդիրները տարբեր հարթություններում են: Մենք պարոն Ջավադյանի և Ոսկանյանի հետ որոշակի աշխատանք արեցինք, նոր օրենքի վրա աշխատեցինք, սակայն մտավ ԱԺ և ամբողջությամբ փոխվեց:

Պաշտոնական մեկնաբանություն. Ես կարծում եմ սխալ ընկալվեցի, որովհետև իհարկե կոոպերատիվների նկատմամբ վերաբերումքը բացասական է, բայց և այնպես դրանք կարևոր են և խոսք չկա դրանցից հրաժարվելու մասին, իսկ հարկման հարցն ավելի ընդհանուր է և երկար քննարկման կարիք ունի:

Ա. Թարվերդյան՝

Մենք օրակարգի կարևորագույն հարցը լսեցինք, պատահական չէ, որ հայեցակարգային մոտեցումները, որոնք ներկայացվեցին, այն ուղղություններն են, որոնք հետագայում պետք է դառնան և՛ հայեցակարգային, և՛ աշխատանքային ծրագիր: Այդ առումով բոլոր դրույթները, որոնք նշվեցին, ուղենշում են առաջիկա գործունեությունը, և չի բացառվում, որ նախկին ծրագրերում նույնպես կան դրական մոտեցումներ, որոնք պետք է շարունակական լինեն: Առաջարկում եմ, որպեսզի Ա. Ոսկանյանը, Հ. Ջավադյանը, Վ. Ուռուտյանը և Ա. Իսկոյանն առաջիկա երեք ամսում մշակեն գյուղատնտեսության զարգացման հայեցակարգ և հաջորդ հանդիպմանն արդեն քննարկում լինի: Մենք տեսանք, որ շատերին հետաքրքրում են տեխնոլոգիական հարցեր, իրավական հարցեր: Այդ առումով մենք առաջարկներ կուղարկենք ըստ ոլորտների, որոնք պետք է քննարկվեն այսպես կոչված փորձագիտական խմբերում կամ նախարարին կից գիտատեխնիկական, մասնագիտական խորհուրդներում:

Պաշտոնական մեկնաբանություն. Առաջարկությունն ընդունելի է:

Հ. Ջհանգիրյան՝

Այս ամենը, ինչի մասին խոսում ենք, ուղղորդված է նրան, որպեսզի յուրաքանչյուր ոք, աշխատող, ով ստեղծում է բարիքներ, լավ ապրի իր երկրում, ունենա զարգացած, կայուն, անվտանգ երկիր, դրա համար ես կուզեի, որպեսզի բոլոր ծրագրերում, որոնք իրականացվում են, անպայման հաշվի առնվեն աշխատողի պայմանները, անվտանգությունը: Գոյություն ունի 184-րդ կոնվենցիան, որը վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի հիգիենայի անվտանգությանը. մենք կարողացել ենք այն ներկայացնել քննարկման եռակողմ հանձնաժողով, սակայն դեռ չի մտել օրակարգ, ես կուզենայի առանձին հանդիպման ժամանակ տեսնենք, թե ինչպիսին է լինելու մեր միջնորդությունը, որպեսզի կոնվենցիան անպայման վավերացնենք:

Պաշտոնական մեկնաբանություն. Ընդունվել է ի գիտություն:

Օրակարգի 2-րդ հարցով ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2016 թվականի ապրիլի 18-ի N 109-Ա հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ անցկացվել է վիճակահանություն՝ խորհրդի նոր անդամների համալրման նպատակով:

Մինչ վիճակահանության մեկնարկը խորհրդի 5 անդամներ՝ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը (լիազորված անձ՝ Վ. Ուռուտյան), «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (լիազորված անձ՝ Գ. Սարդարյան), «Արենի» փառատոն» հիմնադրամը (լիազորված անձ՝ Ն. Մանուկյան), «Հայաստանի մսամթերք արտադրողների միություն» ԻԱՄ-ն (լիազորված անձ՝ Ա. Բիլյան), Ա. Թարվերդյանը հայտարարել են խորհրդի կազմից ինքնակամ դուրս գալու մասին:

Վիճակահանության արդյունքներով՝ խորհրդի կազմում անդամությունը կդադարեցնեն նաև «Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն» ԻԱՄ-ն (լիազորված անձ՝ Ե. Թարվերդյան) և «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (լիազորված անձ՝ Ա. Իսկոյան):

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ **Ս. ՀԱԿՈԲՅԱՆ**